# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**-Ա**

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի  23-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Սահմանել՝ հանրային հեռարձակողի խորհրդի անդամի մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2020թ.**

**«____»____-ի N ____-Ա որոշման**

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ**

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հանրային հեռարձակողի խորհրդի (այսուհետ` Խորհուրդ) անդամի թափուր տեղի համալրման մրցույթին (այսուհետ` Մրցույթ) մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման ընթացակարգը:

2. **ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

2. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը`

1) դիմում` համաձայն Ձև 1-ի,

2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն,

3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն,

4) ինքնակենսագրություն` համաձայն Ձև 2-ի,

5) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր` գիտական, ստեղծագործական աշխատանքներ, հրապարակումներ կամ դրանց ցանկը (առկայության դեպքում),

6) ուղեկցող նամակ (հակիրճ ներկայացվում է այս պաշտոնով հետաքրքրվածության պատճառները, հանրային հեռարձակողի զարգացման հայեցակարգը (մինչև 5 էջ) և դիմումատուի այն հմտությունները, որոնք, նրա կարծիքով, անհրաժեշտ են տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար,

7) 2 լուսանկար` 3x4 չափսի,

8) հայտարարություն` համաձայն Ձև 3-ի:

3. Փաստաթղթերը 5 օրինակից ներկայացվում են Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով` մրցույթի անցկացման մասին հայտարարելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն քննարկվում:

–

***Ձև 1***

Հեռուստատես
հանձնաժողով

__________________

(անուն, ազգա

**ԴԻՄՈՒՄ**

**Խորհրդի անդամի մրցույթին մասնակցելու վերաբերյալ**

*Դիմումատուի անուն, ազգանուն*
______________________________________________

*Հաշվառման հասցեն*
_______________________________________________________________

*Հեռախոսահամարը, էլ. հասցեն*
______________________________________________

*Կից փաստաթղթեր.*

1. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն _ _______ թերթ,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի պատճեն ________ թերթ,
3. ինքնակենսագրություն ________ թերթ
4. ուղեկցող նամակ ________ թերթ
5. հայտարարություն ________ թեր
6. այլ փաստաթղթեր ________
7. 2 լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

*Ընդամենը՝ ________ թերթ:*

Դիմող ________________________________ ________________
(անուն, ազգանուն) (ստորագրությ

_____ _________ _____________

(օրը, ամիսը, տարեթիվը)

_

***<u>Ձև 2</u>***

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Անուն, հայրանուն, ազգանուն
Ծննդյան օր, ամիս, տարի
Ծննդյան վայր, երկիր
Հաշվառման բնակավայր
Մշտական բնակավայր
Քաղաքացիություն
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)

Օտար լեզուների իմացությունը.
**Բանավոր.**
նշել լեզուն և իմացության մակարդակը ՝ վատ, կամ բավարար, կամ լավ
Օտար լեզուների իմացությունը.
**Գրավոր.**
նշել լեզուն և իմացության մակարդակը ՝ վատ, կամ բավարար, կամ լավ

Ուսումնառությունը, կրթությունը.
թվել կրթօջախները, տարիները, մասնագիտացումները

Աշխատանքային գործունեությունը.
թվել աշխատավայրերը, փորձագիտական աշխատանքը, տարիները, պաշտոնները

Տեսալսողական մեդիայի, գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտներ
գործունեության փորձի նկարագիրը.
թվել հիմնարկները կամ կազմակերպությունները, տարիները, մասնագիտացումները

Վերապատրաստումները.
թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը

Այլ տեղեկություններ.
գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևն
Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումներ

Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում հաղորդել Մրցութային
հանձնաժողովին

Հեռախոսահամար
Էլեկտրոնային հասցե
Փոստային հասցե
Անհատական բլոգ կամ համացանցային էջ (առկայության դեպքում)

***Ձև 3***

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

______________________________________________________________________________-ի

անունը, ազգանունը և հայրանունը

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթներով հայտնում եմ հե

1. հայերենին ___________________________________________

(տիրապետում եմ, չեմ տիրապետում)

2. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գո

___________________________________________

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

3. սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն

___________________________________________

(ունեմ, չունեմ)

4. կուսակցությունների ղեկավար մարմնի անդամ և նրա հետ փոխկապակցված անձ

___________________________________________

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

5. մասնավոր Հեռարձակողների հիմնադիր

___________________________________________

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

6. Հանրապետության նախագահի և նրա հետ փոխկապակցված անձ

___________________________________________

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

7. Կառավարության անդամ և նրա հետ փոխկապակցված անձ

___________________________________________

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

8. Ազգային ժողովի նախագահի և նրա հետ փոխկապակցված անձ ________________________________________

(հանդիսանում եմ, չեմ հանդիսանում)

_____ ____ __________ (օրը, ամիսը, տարեթիվը)

________________ (ստորագրություն)

_________________________ (լրացնողի անուն, ազգանուն